

ընցաւ. զտիրկեաւան¹ կախից, զքեամար կապից, զըրէխէ² շապիկ խաղաւ, զքիւրք էթըլ վըր թիւին, աչքիր շուռ առից, յըմէն մէքեան շինու կթիւէ,³ էնու բեղիր օլիւրից, զականջ ընցաւ, էնու մաղիր կանդնան զրիւն շապիկ տիւս էտու: Կանչից սայիսքիրուն⁴ զձին թիւրիցին, սաղաթէ զին⁵ խախ քեամակ, աշաուզլամայ⁶ ուրքէր⁷ կախից, ձեռ էթըլ զգեւոր զիրուց, իրիք խարիր բաթման: Տիրըմ կանչից վերան, էրկուս առին յիրուր, ըցկուն զիւր զկեարկին յիրարու, անցկուն ինչ կարկուտ կեայ:

Քեախըսիր իրն բարաք ախխաւ, թի Ռոստամ կինացիր թիւրանայ թագաւորի սահրանգիի առից ուր կուշում կինաց: Ասաց. — Երիս չերթամ, զՌոստամ տսպանին կուշումով: Էկաւ, տեսաւ Ռոստամ կանցին կոխ:

Դիւ զկարմունջ էթող, թիւրանայ թագաւոր լցուաւ մեանչ սէհրանգին: Շատ մարդ տսաց. «ախչարք աւրաւ: Թող էղիր ի էրկնուց իրիս բռնի»:

Ռոստամ զեւորդ ըմ էղայ կ զՓիլասըմ սպանից: Սաղիր չալիցին, իրանայ թագաւոր թիւրանայ թագաւոր, էրկու կուշում առին յիրուր, էնքան իրար ջարդիցին, էրուն էղաւ զիտ, զճամդաթիր կանը: Տիրըմ թըրխուց ընկեաւ թիւրանայ թագաւորու տքեար, թիւրանայ տքեար փախաւ, իրանայ թագաւոր ինկեաւ յիտիւ: Աւաշահատառիտ ընցաւ, իրանայ թագաւոր զեարձաւ: Որ սպանուաւ, տիւ ողջ մնաք, որ մնաց կինաց ուր տուն խասաւ ուր մրաղին: Տիւ էլ խասնիք ձի մրաղին:



ԱՅԼ ԵՒ ԱՅԼԸ

Քնի ապրեցութիւնը մարդկային կեանքի երկարահետքեան վրայ: Անգղիացի յայտնի բժիշկ Ջէմս Սայէրը, իւր երկամիտութիւններից մէկում, եկել է այն եզրակացութեան, որ տեսականապէս որոշելով՝ մարդու կանոնաւոր քունն 8 ժամից աւելի չպիտի լինի, Սակայն, ինչպէս վկայում է ինքը պ. Սայէրը, դարիս առաջնակարգ գիտնականները, որոնք իրանց ամբողջ կեանքը նուիրած են եղել գիտութեան զանազան ճիւղերի ուսումնասիրութեան, երբէք այդքան երկար ժամանակ չեն տուել քնի Օրին. Օկսֆորդի համալսարանի ուսուցչապետ Լէյզըր, այդ հռչակաւոր շինագէտը, թէեւ ամէն օր վեր էր կենում առաւօտեան ժամի 3-ին և քնում էր միմիայն 5 ժամ, 82 տարեկան մեծաւ:

Ճարտարապետ Բրունէլը, որն իւր ժամանակին մեծ համբաւ ուներ, իր կեանքի ընթացքում մեծ մասամբ օրական 20 ժամ էր աշխատում: Նա համարեա ամբողջ գիշերը զանազան գործերով էր զբաղւում և միայն 3 ժամ էր նիրհում այն էլ բաղկամտում նստած. իսկ երբ վարժնում էր, իսկոյն գործի էր կաշւում, նա չնայելով այդ դերժանեան և ճշնական գործնութեան, որն անընդհատ շարունակւում էր ամէն օր, նա հասաւ զառամեալ ծերութեան:

Ժորժ Լիլիոտը (Լորդ Գետֆիլդ), որը մեծ հռչակ էր ստացել 1779—1793 թուականներին Ֆրանսիայի և Սպանիայի միացեալ զոյժերի դէմ քաջութեամբ պաշտպանելով Ֆրիբուրգը, օրական 4 ժամ էր քնում, բայց 86 տարեկան մեծաւ, Իսկ հանձարեղ Լուիսօլլը, ծերութեան օրերում հաղիւ միայն 4 ժամ էր քնում, այն ինչ, երբ նա երիտասարդ էր, ինչպէս ինքն է վկայում, բաւականանում էր միայն 2 ժամուայ քնով:

Վերոյիշեալ բոլոր օրինակները, Ջէմս Սայէրի կարծիքով, ապացուցանում են, որ կեանքի երկարատևութիւնն ամենին կախումն չունի երկարատև քնից: Բայց դեռ հարց է. արդեօք ճշմարիտ է այդ, և միթէ վերոյիշեալ բոլոր դէպքերն ընդհանուր օրէնքից իրեն բացառութիւններ չպէտք է ճանաչուին:

*
* *

Իրախանիստ օր քորի ետ գոյն. — Յայտնի է, թէ որչափ մեծ նշանակութիւն ունի արդի եւրոպական կեանքում նորաձեւութիւնը (մոդան), Այ միայն չքեղ զարգարանքներն ու առօրեայ կեանքի անհրա-

¹ մեռ եւ անկողն ² զրահ ³ շինական բաժակ

⁴ Զիւսպանների. ⁵ Թամր ⁶ Ոսկերած

⁷ սպանդակ.

ժեշտ պիտոյքներն, այլ հասարակ բողոքովն չըն-
չին իրենն անգամ ենթարկուած են նրա հզօր ղոթի
ազդեցութեան: Այսպէս այժմ Անգլիայում նա-
մակի թղթի գործածութեան համար մի նորաձեւու-
թիւն է ընդունուել, որով իւրաքանչիւր օր տարբեր
դոյնի թուղթ է պահանջուում: Օր- երկուշարթի
օրերը այդ նորաձեւութեան հետեւողները գրում են
ծովագոյն թղթի վրայ, երեքշարթի՝ վարդագոյն
թղթի, չորեքշարթի՝ գորշագոյն, հինգշարթի՝ կապ-
տագոյն ուրաւ՝ դեղնագոյն, իսկ կիրակի՝ սպիտակ:
Եւ շատ հասկանալի է, որ իւրաքանչիւր այդպիսի
մի նորաձեւութիւն ապրանքի նոր պահանջ է զար-
թեցնում և մեծ օգուտ բերում գործարանատէրե-
րին, որոնք և խախուսուած նորանոր ձեւեր են մտա-
ծում անդադար:

*
* *

Թանկագին դիւտ Վաշինգտոն.— Մօտ ժամանակ-
ներս Վատիկանի մատենադարանում մի վերին աս-
տիճանի հետաքրքիր ձեռագիր է գտնուել: Մատե-
նադարանագետներից մէկը, արքայ Գոգա—Լուչին,
երբ ժ. Դարի պաշտնական թղթերն էր կանո-
նաւորում, պատահմամբ գտաւ Գալիլէյի սեպհա-
կան ձեռքով գրած մի երկասիրութիւն, որը վա-
ղուց կորած էին համարում: Այդ գրութեան 9193
համարն է կրում և ունի հետեւեալ յիշատակարանը.
«Գրուած է Լուովմում: Մեղիլէի այգում, 1616
թուի յուն. 8-ին»: Գալիլէյն իր այդ երկասիրու-
թիւնը նուիրել է Օրսինի ծիրանաւորին, որը մեծ
գիտնականի մեկնասաններից մէկն էր, Լեոն ժ. Գ.
պապը շատ է հետաքրքրուում այդ գիտով և հրա-
մայել է այն Վատիկանի հաշուով ի լոյս ընծայել:
Հետագայի ընթացքը մինչև այժմ հրատարակուածից
շատ է տարրերում և բացատրում է ծովերի մակ-
ընթացութեան և տեղատուութեան օրէնքը:

*
* *

Թղթակցի աշխատանք.— Անգղիացի երիտասարդ
ճանապարհորդ Ալբերտ Լէյքը, Ափրիկայի Ու-
գանդա նահանգում կատարած բուսական երկա-
րատե ուղեգրութիւնից յետոյ, Անգղիա է վերա-
դարձել: Նա եղել է այն նշանաւոր կուսական ան-
տառում, որտեղ թղթակցներ են բնակուում և որտե-
ղից առաջին անգամ Մտէնլին էր անցել: Լէյքը,
ինչպէս ինքն է պատմում, աւելի հարաւ է գնացել
և շնայելով որ այդ ճանապարհորդութիւնը Բա-
գանդա ցեղին պատկանող մի քանի ծառաների ու-
ղեկցութեամբ միայն կատարել է և անցել մարդա-
կերների բնակած տեղերից, այնուամենայնիւ ան-
փորձ է մնացել և առանց մեծ արգելքների կարո-
ղացել է բնիկների հետ յարաբերութեանց մէջ
մտնել:

«Մենք ամբողջ 20 օր թափառեցինք այդ կու-
սական անտառում: պատմում է երիտասարդ ան-

գղիացին, ճանապարհին մեզ շատ թղթակցներ էին
պատահում: բայց նրանք աշխատում էին, որքան
կարելի է շուտով խոյս տալ մեզնից: Եսկ երբ
անտառի խորքն էինք հասել, հանդիպեցինք մի
փոքրիկ գիւղի, որը բաղկացած էր մի քանի
վրաններից: Թղթակցները մեզ տեսնելով՝ ընդ ա-
ռաջ գուրա եկան, նրանք ինձ ասացին, որ հինգ
օր է ինչ հետեւում էին մեզ: Իսկ ձերը վախե-
ցած էին երևում և երբ հետս խօսում էին,
ծածկում էին երեսները: Այդ գիւղին ես նրանց
գիւղումն իջեանցի և առաւօտեան ցեղի առաջ-
նորդից իրաւունք խնդրեցի իր հպատակներից մի
քանիսի նկարը հանել: Նա համաձայնեցաւ, բայց
թղթակցներից ոչ մէկը հանդիստ չէր նստում այն-
պէս որ չկարողացայ յաջող նկարներ ստանալ: Սա-
կայն մեծ դժուարութեամբ յաջողուեցաւ ինձ շա-
փել նրանց հասակը և ընդհանուր գիտողութիւն-
ներից երևեցաւ, որ նորանցից ոչ որ 4 ոտնաչափից
բարձր չէր, բոլորն էլ լաւ կազմուածքի տէր էին
և մինչև իսկ ուժեղ, կանայք միայն տղամարդկան-
ցից մի քիչ թոյլ էին երևում: Աւելի զարգացած
են նրանց ձեռների ու ոտների մկանունքները:
Տղամարդկանց երկար մօրուքները համարեալ թէ
մինչև զօտիներն էին հասնում և նրանց առասպե-
լական ոգիների կերպարանք տալիս: Առ հասարակ
նրանք լուսկեաց և երկնոտ են, բայց խելօք, նրանք
նոր դէնքեր չունենին, գործ էին անում նետ ու
սլաքներ, որոնց ծայրերին թոյն են քսում: Ունին
և կարճ նիզակներ, Բոլոր թղթակցները հովուական
կեանք են վարում և բնակում են երկու երեք
ոտք բարձրութիւն ունեցող վրանների մէջ, Իրենց
անտառից երբէք չեն հեռանում: Այդ ընդարձակ
հնազարեան անտառում մշտական խաւար է թա-
ղաւորում: այնպիսի տեղեր կան, որտեղ ցերեկնե-
րն անգամ անկարելի է կարգաւ: Այնքան խիտ է
բուսականութիւնը, որ լոյսը անտառի ներսը թա-
փանցել չի կարողանում:

Մարդակերների հետ էլ բարեկամական յա-
րաբերութեան մէջ էի: Մի անգամ հեծանիւ նըս-
տած պտտեցի նրանց գիւղը և մեծ դարձաւ պառ-
ճաւելի: Հարեւրաւոր մարդիկ, կանայք ու երե-
խաներ հիացած նայում էին և ուրախութիւնից
ծիծաղում ու վեր վեր թռչկոտում: Թէ ինչպէս
և երոպացին օձը հեծել քշում է, նրանք օձի տեղ
էին ընդունել իմ հեծանիւնը:

*
* *

Կրակի ոտն.— Եւրոպական թերթերից մէկի
թղթակցը Բոմբէյից հաղորդում է հետեւեալ ար-
տասովոր կրօնական արարողութիւնը, որը խիստ
մեծ հետաքրքրութիւն է շարժել բոլոր ներկայ
գտնուող եւրոպացիների մէջ:

Այդ հանդէսը «Շիւա» աստուծո քրմերի կրա-

կի թափօրն է. իսկ Հիւան ժանտախտի Պալիս աստուածուհի Տաւ ամուսինն է:

Հնգկատան նոր դնացած մի քանի եւրոպացիներ հաւատ չէին ընծայում այն բանին, թէ իսկապէս տեղացիք քրմերը, ինչպէս հաւատացնում էին նրանց, կարողանում են կրակի միջից անվնաս անցնել: Ախրաւորուած ծանօթ հնդիկներին մէկը խոստանում է փորձով ապացուցանել այդ:

Ներկայիս պատմում է թղթակիցը, մենք հատուցեցինք մեր ծանօթ հնդիկի պարտէզը: Դաստակերտի առաջ լայնածաւալ մարգագետնի վերայ մի մեծ փոս էր փորուած, որի լայնութիւնը 4, իսկ երկարութիւնը 20 ոտնաչափ էր և ամբողջապէս լիքն էր ահագին խանձողներով: Փայտերը, ինչպէս մենք ամէնքս համոզուեցինք, բոլորովին չոր էին: Բացի դրանից մեր ներկայութեամբ, եղած կրակի վերայ մի հաստ շերտ էլ ածուխ տարածեցին: Այնպէս որ տաքութիւնը 10 ոտնաչափի հեռաւորութիւնից զգացում էր: Հանդիսատեսն հընդիկների հետ ի միասին այդտեղ էր գտնուում և մեր, եւրոպացիներին, փոքրիկ խումբը. ի միջի այլոց կային քիմիայի ուսուցչապետ Բիշարդսոնը, գոկտոր Նիալէյը և ֆրանսիացի բժշկապետ Պասկալը: Ժամի 7-ին մենք տեսա՛ք մօտեցող թափօրը: Առաջից գալիս էր մեծ քրմայետը, սուրը ձեռքին: Նրան հետեւում էին երկու ուրիշ քրմեր, իսկ զրանցից յետոյ բերում էին մի փոքրիկ ապակէ, քանդակներով զարդարուած, պահարան: Որի մէջ մի կուռքի պատկեր կար դրուած: Ծերունի քրմայետը ներկայ դնուողներին յայտարարեց, որ առաջ իւր երկու ընկեր քրմերը պիտի մանեն կրակը, իսկ յետոյ բոլոր հաւատացեալները, բացի կանանցից, և ապա փտահացրեց, որ նրանք բոլորն էլ անվնաս կմնան: Եւ վերջապէս սկսուեցաւ այդ անհատաւորի տեսարանը: Հէնց այն ժողովին, երբ ձերուի քրմայետը երգմանցնում և նղովք էր թափում երկու քրմերը սկսեցին մարմնի օտարտախ շարժումներ անել: Կրակը ձգեցին մի քանի կոկոսի ընկոյզ և այդ երկու քրմերը, բարձրաձայն աղաղակելով՝ կրակը թռան: Մի քանի անգամ նրանք յետ ու առաջ դնացին, եկան բողբոջա կրակի միջից: Բոցը պատել էր նրանց անդամները, իսկ նրանք ոտներով պոս ու այն կողմն էին ձգում ածուխները, որոնցից դուրս եկած կայծերը թռչկոտում էին ամեն կողմ: Ամբողջը թէ մարդ և թէ կին, երգում ու սուր ձայնով ծէում էր: Իսկ քրմայետը իր երգումըն ու նղովքն էր շարունակում: Յետոյ ամբողջի միջից սկսեցին բաժանուել մի քանի տղամարդիկ: Նրանք աներկիւղ առաջ անցան ու կրակը թռան: Նրանց հետեւեցին ուրիշները: Մինչև անգամ չորս տարեկան երեխաները ուրախ ուրախ վաղում անցնում էին կրակի միջից: Փոսից այնպիսի տաքութեամբ

թխւում էր, որ մենք մեր տեղերում նեղուէինք: Այդ ժամանակ մեր խմբից էլ մի պարուն սիրտ առաւ ու կրակը մտաւ: Մենք տեսա՛ք, ինչպէս նա դանդաղ քայլերով անցնում էր կրակի միջից: Նա յետոյ մեզ պատմեց, որ իրեն այնպէս էր թուում, թէ անց էր կենում տաքացած աւազի վրայից:

Ներկայ եղող եւրոպացիներին մէկը կասկած յայտնեց, որ դուք է նրանց ոտների տակին ուրիշ բան կայ կացրած և այդ բոլորը կեղծիք է: Բայց բժշկապետ Պասկալը, քննութիւնից երևեցաւ, որ նրանց ոտների կաշին բնական էր և որ զարմանալին էր՝ նրանց վերայ այրուածքներ չկային:

Քրմերը կէս ժամի չափ մնացին կրակի մէջը: Պարտէզից հեռանալով, նրանք պատուիրեցին, որ ոչ ոք այլ ևս չմտնի կրակը, եւ ժողովուրդը շուտով ցրուեցաւ:

Աւսուցչապետ Բիշարդսոնը, մի քանի ուրիշ տղամարդիկ և ես մտնեցանք կրակի փոսին: Բայց տաքութիւնն այնքան սաստիկ էր, որ մենք սափաւեցանք յետ քաշուելու: և համոզուեցանք, թէ այնտեղ մեր տեսածը կրակ էր և ոչ ուրիշ բան: Մեղից ոչ ոք չկարողացաւ բացատրել իր տեսած հրաշալիքը: Մնում է միայն ընդունել, որ հնդիկներին բնութեան ոյժերից շատերն են յայտնի: Մինչ մեզ եւրոպացիներին համար դեռ դաղտնիք են:

ՍՏԱՆՈՒՄԸ ԳՐԱԷՐ

Դիդըր Աղարոն, ծագում և կենսագրութիւն. — գրեց ընտանեաց ըտերեւում մը. Վենետիկ, 1898:

Մկրտիչ Նաղաշ և իւր տողերը. յաւերած՝ Միջնադարեան տաղեր զարկալութեան վերայ. — Կ. Կասառնեանց, Վաղարշապատ, 1898:

Եղեղի Մկրտչեանց տունը (Աղբիւր — Տարաղի հրատարակութիւն № 53). — Պերճ պոօշեանց, Թիֆլիս, 1899:

Տառապնալներ ծառայ Ռոխը և Կորած Բարեկամը. — Է. Գօրբունով — Պոստալով. Ռուսիայի Լենդաու. — Թարգմ. Գ. Ա. Վաղարշապատ, 1899:

Բաշան (պատկեր) արտատպած Մշակ լրագրից հրատ. Ա. Ը. — Ա. Ահարոնեանց, Թիֆլիս, 1899:

Ինչպէս լրագիրներից տեղեկանում ենք, բոլոր է տեսել նաև մի կարևոր աշխատութիւն՝ Յովհաննէս արքեպիսկոպոս Հաջխաթունեանի կենսագրութիւնը, որն հեղինակն է Մայր Աթոռոյ տաղապոյն անդամներից մէկը՝ Գեորգ Երևաստեան: